# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

2301, ք. Հրազդան, Կենտրոն, Վարչական շենք, Հեռ. (+374 223) 2 37 13 , Ֆաքս (+374 223) 2 36 63, էլ.փոստ kotayk@mta.gov.am

09.08.2013թ. N

## ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁ
## *ՇԻՆԱՐԱՐԻ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ*

*Սիրելի՛ շինարարներ*

Շնորհավորում եմ մասնագիտական տոնի առթիվ և մաղթում, որ Ձեր նշանակալի գործունեության արդյունքում կերտեք այնպիսի կառույցներ, որոնք կհարատևեն և կգնահատվեն մեր գալիք սերունդների կողմից:

Աստծո կամոք հայ շինարարին տրված յուրօրինակ տաղանդի արդյունքում ծնված բացառիկ ստեղծագործությունները մշտապես երախտագիտորեն են ընկալվել ու գնահատվել սերունդների կողմից, որոնք դարերով պահպանվել և այժմ դարձել են մեր հպարտությունն ու աշխարհին ներկայանալու ինքնատիպ այցեքարտը:

Տոնական այս օրվա շրջանակներում ցանկանում եմ ընդգծել նաև Ձեր գործունեության արդիականացմանն ուղղված բոլոր կարևորությունները, որոնք կապահովեն մերօրյա շինարարական արվեստի կատարելագործումն ու համապատասխանեցումը ժամանակի պահանջներին և հրամայականներին:

Դարձյալ շնորհավորելով՝ մասնագիտական տոնի կապակցությամբ ցանկանում եմ, որ մեր երկրում ընդմիշտ հարատևի խաղաղությունը, իսկ Ձեր ընտանիքներում՝ բարօրությունը:

Ամենայն բարիք Ձեզ:

*Հարգանքներով*

Կ.ՇԱՀԳԱԼԴՅԱՆ